Պարույր Սևակ

Առաձայն պատարագ

Երկնքից առկախ մի լեռնակղզի՝
Հայաստան Աշխարհ:
Երկնքից առկախ այդ լեռնակղզու ուղիղ կենտրոնում՝
երկու զանգ հսկա և անձեռագործ:
Եվ այնքա՛ն հսկա, այնքա՜ն վիթխարի,
որ չէին կարող որևէ կեռից ոչ մի կերպ կախվել,
ուստի, պարզապես կործված են հողին:
Անունն՝ Արարատ
կամ
Սիս ու Մասիս:
Նրանց ռումբաձև զույգ լեզվակները խրված են հողում
և, խարսխի պես, հասնում են մինչ հրահեղուկի մթին հատակը:
Ու երբ գործում են այդ լեզվակները՝
երկրաշարժային բոլոր սարքերը
իրենց տագնապն են արձանագրում
լրագրերի գունատ երեսին՝
սև-սև տառերով...
Իսկ ով ունկ ունի,
հավատո բլթակ՝
նա լսում է միշտ և նրանց ձայնը,
ղողա՜նջը նրանց:

Եվ ես չե՛մ, ոչ էլ դո՛ւք եք ղողանջում.
Սիսն ու Մասի՞սն են ղողանջում անվե՛րջ-անդադա՛ր-անդո՛ւլ:
Գողթան երգերի չափ ու կշռույթով,
բամբ բամբիռների նվագակցությամբ,
շարականների ելևէջներով պատարագատու՝
Սիսն ու Մասիսն են ղողանջում անվե՞րջ-անդադա՞ր-անդո՞ւլ.
ով ունի ականջ,
բլթակ հավատո՝
նա լսում է միշտ,
լսում է նրանց զանգը երկնաչու,
որ թարգմանվում է լոկ երկու բառով՝

ՈՂԲԱՄ ՄԵՌԵԼՈՑ

Այս լեռնակղզում լեռնաքարե՞րն են շատ,
թե՞ կերպաձևված շիրմաքարերը:
Եվ ծառե՞րն են շատ այս լեռնակղզում,
թե՞ վեր ծառացած սուրբ խաչքարերը:
Եվ ավելի շատ անտա՞ռ է հատվել,
թե՞ անսուրբ ձեռքով խաչքար է ջարդվել
դարեր ալեծեծ այս լեռնակղզում...
Սակայն ես այսօր և ամենայն օր
մշտական վշտով նրա՛նց եմ ողբում,
ովքեր չունեցան շիրմաքար-շիրիմ,
ինչպես՝ չունեցան պատանք-պատարագ...
-Ողբամ մեռելո՛ց,
անթա՛ղ մեռելոց:
Մե՛կ չէին նրանք
և ո՛չ էլ երկու:
Նրանք՝ բյո՛ւրք-բյուրո՛ց,

նրանք՝ ա՛զգք-ազի՛նք,
և չվախճանվեց նրանցից ոչ ոք
իր անկողնու մեջ մահով բնական,
ո՛չ մանուկ, ո՛չ ծեր,
ո՛չ կին, և ո՛չ այր...
Չմեռա՛ն նրանք, այլ սպանվեցի՛ն՝
լեգեոն առ լեգեոն,
փաղանգ առ փաղանգ:
Չմեռա՛ն նրանք, այլ սպանվեցի՛ն՝
ո՛չ գոտեմարտում,
ո՛չ խրամատում,
այլ իրենց տանը, այգում և արտում,
իրենց սրտի պես լեցուն ցորենի հորերում իրենց,
իրենց հոգու չափ խոր-խորհրդալի ձորերում իրենց,-
մահապարտվեցին հազա՛ր ձևերով,
ամենքն՝ անխնա,
ամենքն՝ անխտիր...
-Ողբամ մեռելո՛ց,
բյո՛ւրք-բյուրո՛ց ողբամ:
Ես ի՛նչ իմանամ, և այդ ո՞վ կասի,
թե ո՞վ էր արդյոք այն առաջինը,
ում սպանեցին,
ա՛յն առաջինը,
որ ընդամենը դեռ միավոր էր:
Բայց միավորի կողքին շարվեցին նոր-նոր զերոներ,
և զերոների թիվն անցավ հնգից ու հասավ վեցի՝
կես միլիոն
ու
մեկ,
մեկ միլիոն

ու
կես,
և ամենքն՝ անպարտ,
և ամենքն՝ անմեղ...
-Ողբամ մեռելո՛ց,
միլիո՛ն մեռելոց:
Ու ջնարակվեց հողը արյունով,
լռած բերանը՝ սարսափով խոսուն,
օդը՝ տագնապով անտեղիտալի,
իսկ ահից կապտած երկինքը լեղակ՝
անխուփ աչքերի մեռելափայլով...
-Ողբամ մեռելո՛ց,
կապտա՛ծ մեռելոց:
Ջարդված ազդրերի ու սրունքների,
անջատված թաթի ու կրունկների
չչափագրված ձևերն այլազան,
պահանջում էին էվկլիդեսական գիտություն մի նոր,
որ նոր էր միայն սկզբնավորվում
էվկլիդեսների շիրիմին պպզած
ահեղ Գորշ Գայլի մութ ուղեղի մեջ՝
ի տես սրածվող մի ամբողջ ազգի,
որ հնամենի իր հողի վրա
մի պտղունց հողով աչքը փակելու
բախտից էր զրկվում...
-Ողբամ մեռելո՛ց,
անհո՛ղ մեռելոց:
Բոլոր բանտերից ազատել էին մարդասպաններին
և զինել քենով
ու հրազենով.
-Կեցցե Բարաբբա՛ն...

Եվ լցվել էին բոլոր բանտերը մարգարեներով՝
խոսքի՛ ու երգի՛,
մտքի՛ ու ձեռքի՛,
հո՛ւյս ու հավատքի՛ մարգարեներով.
-Հիսուսի՛ն ի խաչ...
Կախաղաններից ճոճվող սրբերի դուրս ընկած լեզվից
հպարտությունն էր անընդհատ ծորում,
արհամարանքն էր շողիքն իր թորում
մարդկության վրա,
ա՛յն խեղճ ու կրակ - թշվառ մարդկության,
որ ինքն էր նաև խեղդամահ լինում,
քանի որ նրա կոկորդում նեղլիկ
մարդկայնությունն էր խրվել-մնացել...
-Ողբամ մեռելո՛ց,
խեղդվա՛ծ մեռելոց:
Իրենց մինուճար ու սրտահատոր դիակի վրա
մայրեր-մանուկներ,
քույրեր-ծերուկներ
կաղկանձում էին, սակայն... անարցո՛ւնք.
սպառվել էին նրանց արցունքի պաշարները ողջ,
ինչպես որ իրենց անբան թշնամու գանձարան-խազնեն:
Ու երբ հասնում էր մահը ցանկալի,
իրենց ոսոխից վրեժ լուծելուն այլևս անկարող,
գեթ աստծուց էին վրեժն այդ լուծում՝
թքելով դեպի երկինք,
մի երկինք,
որ աշխատում էր նրանց հետ խոսել
աստղերի լեզվով խուլ ու համրական.
-այլևս այդ լեզուն հասկացո՛ղ չկար...
որ ասուպներ էր շաղ տալիս հերթով,

ասես թե պառավ գուշակի նման գարի էր գցում.
-ո՞վ կհավատար այսքանից հետո...
որ արշալույսով, հարալեզի պես,
լիզում էր նրանց կարմիր վերքերի բոցերը.
-իզո՛ւր...
որ լուսնալույսով ցողում էր նրանց խոցերը.
-իզո՛ւր...
Հասնում էր մահը՝ ցանկալին միակ,
և ամուր սեղմած ատամն ատամին,
մահանում էին՝ բա՛ց ատամներով,
ատամների տակ վրե՛ժն անկատար...
Եվ Արարատից մինչև Արաֆաթ, Սիփանից - Սինա,
Սև ծովից - Կարմիր, Կարմիրից - Մեռյալ
փռված-սփռված մեռելներն իրոք
վրե՛ժ լուծեցին թշնամուց իրենց՝
արտաշնչելով ժանտա՛խտ, տե՛նդ ու տի՛ֆ...
Եվ երկնից առկախ այս լեռնակողին
դարձրեցին այնժամ մի թշվառ... թատրո՛ն,
ուր կրակը լոկ՝ ողբերգա՛կն այդ կույր,
խաղաց բազմաթիվ-բազմազան դերեր:
Ծուխն էր համբարձվում՝ Հիսուսի նման,
կրակն էր մնում՝ Մուհամմեդի պես..
Եվ հրից-մրից
երկնքի կապույտ սպունգը ցամքեց ու ճմռտորվեց՝
վաչկատունների տրեխի նման:
Ու ճմռտորվեց հողն էլ ներքևում՝
փլատակներով,
ու ճմռտորվեց ա՛յն դրամի պես,
որ շպրտում են... պոռնիկի դեմքին:
Եվ երկրի վրա,

այրվող տներից - շեներից բոլոր,
ողջ ու կենդանի բյուր կիզվողների ճիչի հետ մեկտեղ
փռվեց զառանցանքն՝ ազանի՜ նման:
Սարսափն էլ երկրի ձայները բոլոր
հավաքեց բռում,
կախեց մատներից՝
նվագավարի-խմբավարի պես,
և անիրավված-տարաբախտ երկրի
ողբերգախաղաց բացօթյա բեմում
հնչեց մի համե՛րգ,
մի համանվա՛գ,
որ մղձավանջն էր՝
շարունակելի՞ն...
Զարդեցի՞ն այնպես՝
ոչնչի՛ համար
և
ամե՞ն ինչի:
Ոչնչի՛ համար
և
ամե՞ն ինչի:
2 000 000 մարդ ի խաչ բարձրացավ,
2 000 000 խաչ շտնկվեց հողում,
2 000 000 խաչ տապանաքարին չփորագրվեց,
քանզի... հասարակ տապան-դագաղը
կարծես թե դարձավ աստծու պես մի բան.
մա՜րդ չարժանացավ նրան տեսնելու եզակի բախտին...
Ինքը երկիրն էր մի անկափարիչ դագաղ վիթխարի,
մինչ նրա բոլոր բնակիչները՝ անդագաղ դիեր...
Եվ ահավասիկ ես ասում եմ ձեզ՝
տասնըմեկերորդ պատվիրանի պես.

-Ամենից առաջ
փայտե դագաղի՞ պաշտամունք պիտի ունենալ կյանում,
փայտե դագաղի՛,
նաև պատանքի՞:
Դագաղ-պատանքի՛ պաշտամունք պիտի ունենալ, այո՛,
վասնզի եթե չի ճարվում դագաղ,
ուրեմն արհավիրք-աղետ է ահեղ,
վասնզի եթե դին չի պատանվում,
ուրեմն ամեհի-ահարկու օրհաս,
մահ - տարաժամ է,
եղեռն ու նախճիր...
Եվ դո՛ւ չես ասում, ոչ էլ դո՛ւք,
այլ ե՞ս,
ես՝ Սիս-Մասիսըս,
այդ ես եմ ասում
անդո՛ւլ-անդադա՛ր-անվե՞րջ զնգացող իմ անքուն զանգով:
Գողթան երգերի չափով ահազդու,
բամբ բամբիռների հնչումով խրոխտ
Սիսն ու Մասիսն են ղողանջում անվե՛րջ-անդադա՛ր-անդո՞ւլ...
ով ականջ ունի,
հավատո բլթակ՝
նա լսում է միշտ,
լսում է նրանց հանգերգն ահազդու,
որ թարգմանվում է նույնպես զույգ բառով.

ԲԵԿԱՆԵՄ ՇԱՆԹԵՐ

Բեկանեմ շանթեր
իմ գլխի՞ վրա,
որ ճերմակել է ո՞չ լոկ հարանքից ու չարչարանքից.

որ ճերմակել է բեկված-բեկբեկված բազում շանթերի
դարավոր փոշո՛ւց,
աճյունի՛ց ճերմակ...
Բեկանեմ շանթեր՝
իմ աչքերի՛ մեջ,
որոնց բիբերը խառնարաներ են ծփացող հուշի
և որոնց համար սպիտակուց է դարձել նո՛ւյն փոշին՝
բեկված-բեկբեկված բազում շանթերի փոշին սպիտակ...
Բեկանեմ շանթեր՝
իմ հոգո՛ւմ մթին,
կուպրանե՛րկ հոգում,
ուր գահավիժված հրեշտակներ են անբառ մորմոքում
մեռած հավատի
և մարած հույսի դիակի՛ վրա՝
միակի՛ վրա...
Բեկանեմ շանթեր
և լեզվի՛ս վրա,
իմ թլվա՛տ-կակա՛զ-կա՛պ ընկած լեզվի,
կա՛պ ընկած՝ ի տես մի իրողության,
որ երբևիցե չէր եղել... եղավ,
որ չէր կատարվել երբեք... կատարվեց...
կա՛պ ընկած՝ նաև ի նշան անզոր-անկարողության՝
ասելու համար ողջ անասելի՛ն
և անպատմելի՛ն պատմելու համար...
Եվ իրոք.
այդ ո՞վ կարող է հիմա
թեկուզ կցկտուր և անկապակից խոսքերով ասել,
թե ի՛նչ կատարվեց:
Նախ՝
Քրիստոսը մեծացավ, ինքնին, ևս մի տարով,

և երկրագնդի պտտվող կողին՝
հասարակածի լայնության վրա
սառցե գրիչով մեծատառ գրվեց
նրա տարիքը՝
1914 թիվը:
Եվ օրացույցը՝
կրկեսի բեմին կյանքն իր նվիրած
ձեռնածու կնոջ հայտնի նազանքով,
սկսեց մեկ-մեկ ուսերից նետել իր հագուստները.
ամեն օր՝ մի շոր:
Ունայնությամբ էր արևն զբաղված,
երկինքը՝ անվերջ դիմակ փոխելով.
կռիվ էր տալիս օդը օդի հետ,
օդն օդից պարտվում,
հաղթում օդն օդին,
և կնքվում էր այն հաշտությունը կարճ,
որ ծանոթ է մեզ գարուն անունով:
Մարդկանց ու կանանց գրկաշփումից
լույս աշխարհ էին գալիս մանուկներ՝
իրենց ճիչերով մարգարեական:
Հողի և ջրի շփումից տամուկ
թթխմորվում էր և՛ գինի, և՛ հաց:
Թուղթ ու թանաքի հպում-շփումից
բռնկվում էր միտք ու ժայթքում էր երգ:
Իսկ բթամատի ու ցուցամատի շրջուն շփումից
ծնվում էր դրամ...
Բայց բթամատի ու ցուցամատի շխկուն շփումից
շատ հաճախ նաև հրդեհ է ծագում,
եթե ցուցամատ-բութ մատի տերն է մի բութ բարբարոս:
Ո՞վ շրխկացրեց իր ցուցամատով ու բթամատով:

Եվ այդ շրխկոցը մահացու փոթկաց
ինչ-որ տաքգլուխ մի ուսանողի ատրճանակից,
ու գնդակը տաք ոչ թե մխրճվեց
ինչ-որ Ֆերդինանդ Ֆրանցի սրտում,
այլ հեգ մարդկության ուղեղի հենց ա՛յն կենտ բջիջի մեջ,
որ մարդկայնության կենտրոնն է միակ...
Աշխարհը շրջվեց բերանի վրա և ապա մեջքի՝
աշխարհն ինքն իրեն կործեց ու շտկեց,
շուռ ու մուռ եկավ ջղաձգվելով՝
ավազախրված - խեղդվող ձկան պես.
և թավալ տվեց՝
գոռեխ-մոգերից կարեվեր խոցված մտրուկի նման,
ու հանեց փոշի՛,
այնպիսի՛ փոշի,
որ խցեց աչքերն ամբողջ մարդկության,
փակեց երկինքը և ծածկեց աստծուն,
ա՛յն աստծուն,
որի որդու տարիքը նույն այդ ժամանակ
ավելացել էր և՛ս կես տարով...
Եթե մինչև այդ դիվանագետներն անուշ ժպիտով
քարկտիկ էին իրար հետ խաղում՝
ոռպեն մեկ երկինք (աստծո՛ւն) նայելով,
իսկ մի պահ հետո՝ սեփական ափին,-
դիվանագետներն այժմ տեղ տվին տերերին իրենց,
որ... ոտնագնդակ խաղան մոլեգնած՝
արկով հեռահար
և հեռաթռիչք ռումբ ու ականով...
Գնդացիրները
խեղջ արտույտներին ու տատրակներին գործազրկեցն:
Հրացանների

թոքախտավորիկ հազն էր վերջանում արնահոսումով:
Թնդանոթները
իրենց երախի քրքիջով խեղեշ
ծանակում էին պարսատիկավոր Դավթին խղճալի,
իսկ սպանվողը ինչ-որ Գողիա՛թ չէր,
այլ մի մարդկությո՞ւն իր մարդկայնությամբ...
Թթվել էր կարծես հողը բովանդակ,
ու թթվել էին ծովերը բոլոր,
և թթվածության խմորիչ մանրէն արկ-ականն էր նույն,
որ հող ու ջրի պղպջակներ էր պայթեցնում ահեղ՝
դեպի վե՛ր, երկի՛նք,
որտեղ Հիսուսը, նստած Հոր աջում,
ինքնին մեծացավ արդեն մե՛կ տարով,
և երկրագնդի կիսարյունաքամ - գունատ ճակատին
արյունոտ մատով աղվեսագրվեց
1915 թիվը...
Եվ գոլորշու պես մանեման եկող տագնապն անմեռուկ,
որ հարկահանն է համայն աշխարհի
և տանուտերն էր այս լեռնակղզու,
ցրտից կծկվեց.
կարկուտ դառնալու անբեկ վճիռով՝
նա խտանում էր:
Եվ խտանում էր վտանգը նաև՝
համայն աշխարհի մշտական քեռին
և խորթ հայրիկը այս լեռնակղզու,
խտանում այնպե՛ս,
ինչպես արյունը, երբ լերդանում է:
Ծպտյալ ոճիրը հանդերձ էր փոխում՝
տեսակցությունից ուշացող բոզի աճապարանքով:
Քենը քողարկված, ոխը դավադիր

իրենց վզերի կապն էին կրծում՝
շղթայի զարկված շների նման,
նո՛ւյն այն շների,
որոնց աղոթքը թե հասներ աստծուն՝
երկնքից ոսկրի անձրև պիտի գար:
Շների աղոթքն իսկապե՞ս լսվեց...
Եվ մահը՝ մեծը մաթեմատիկոս,
Գորշ Գայլի արնոտ ժանիք-գրիչով
գրանցման մատյան - թահրիր դեֆտերում
համարակալեց մի ամբո՞ղջ երկիր՝
իր քաղաքներո՛վ, շեներո՛վ ամեն
և մինչև անգամ վերջի՞ն քոդտիկով:
Համարակալեց բովանդա՛կ մի ազգ՝
ծե՛ր ու մանուկո՛վ,
կին ու էրիկով
և մինչև անգամ խելառո՞վ վերջին:
Անգլուխ-անպոչ այդ պետության մեջ
չէ՞ր եղել երբեք ու երբևիցե
այսպիսի ստո՛ւյգ, այսքան ճշգրի՛տ
մի մարդահամար,
այնքա՞ն ճշգրիտ,
և ստո՞ւյգ այնքան,
որքան որ իրենց փեյղամբարների
և կամ հարեմի հարճերի թիվը:
1915 թիվը...
Եվ եղավ... կյանքի ճոխ տոնավաճառ,
բարբարոսության աճուրդ մեծագին
և մարդկայնության փակ գրավատուն...
Եվ եղավ... մի նոր՝ երկրո՛րդ ջրհեղեղ,
որ իր տակ առավ - առաջի՞ն հերթին -

ա՛յն երկիրը հենց, որ Նոյին փրկեց:
Եվ իր տակ առավ այն ժողովրդին,
որ 15 դար
սրտով ու շրթով հայցեց իր աստծուն՝
«Արձակեա՛ զմեզ»,
բայց Տերն արձակեց նրա ոսոխի՛ն՝
միայն սաստումի թելով ձերբակալ
ու սուտ խոստումի մազով թևակապ
ոսոխի՛ն նրա:
Եվ ինչո՞ւ:
Արդյոք ո՞չ այն պատճառով,
որ աստվածները տանե՛լ չեն կարող իրենց նմանին,
ինչպես որ ազգը՝ իրենից բարձրը իր հարևանին...
Եվ եղավ, օ ո՛չ, և եղավ... խավար,
այսինքը՝ սկիզբ,
այսինքն՝ մարդու տարեգրության նո՛ր դարագլուխ,
հիմնադրումը գիտությա՛ն մի նոր.
-առաջին դեպքը ո՛չ կոտորածի,
առաջին դեպքը... ազգասպանությա՛ն:
1915 թվին...
Եվ այդ թվին էր,
որ մի ողջ ազգի աղոթքը սառեց շրթունքի վրա,
լերդացավ բերնին՝
բերնից դուրս ժայթքող արյան հետ ու պես
մինչդեռ շների աղոթքը լսվեց անտեր երկնքում...
Եվ ոսկրով ծածկվեց մի հսկա երկիր,
ուր (ճիշտ են ասել ու ճիշտ եմ ասում)
եղել էր ու կար շնից շատ իշխան,
բայց իշխանություն չի՛ եղել երբեք.
եղել էր ու կար թերևս արդար,

բայց արդարություն... ալլա՜հը թող տար.
երկի՛ր, որ տրվեց դարեր շարունակ ալան-թալանի,
ուստի չէր կարող չլինել աղքատ ու դատարկափոր:
Եվ ասում եմ ձեզ՝
պատվիրանի պես.
-Պետք է վախենալ թագակիր ցուլի՛ց,
գահակալ ձիո՛ւց,
բայց ավելի շատ՝
գայիսոնակիր մուրացկանների՜ց պետք է սարսափել,
վասնզի եթե փորը թափուր է և ափն է դատարկ,
ապա գլուխը լեփ-լեցուն է միշտ ոճիր-նախճիրով:
Պետք է սարսափե՜լ մուրացիկներից գայիսոնակիր,
վասնզի եթե այդ գայիսոնը ոսկուց է անգամ
ու զարդարված է եթե մինչևիսկ ադամանդներով,
իմացե՛ք, որ դա խաբկանք է աչքի.
-նրանց գայիսոնն ու մականը միշտ ոսկորն է միայն՝
մարդու ող կամ կող,
ազդրը կամ սրունք:
Եվ ի՜նչ աստծու էլ նրանք դավանեն՝
դարձյա՛լ ոսկորի պաշտամունք ունեն,
ոսկորի՛,
ո՛չ թե տապան-պատանքի:
Եվ ասում եմ ձեզ՝
պատվիրանի պես.
-Վախեցե՛ք կյանքում սովագարներից
առավել, քան թե խելագարներից,
որ գահին՝ ինչպես մրջյունին՝ բազմում
ու ձեռքն են առնում ուղտին աժդահա:
Իսկ երբ սովագարն ու խելագարն են միություն կազմում
ինչ-որ ազգի մեջ,

ուղտն էլ է դառնում խորհրդանշանն ուրիշ մի ազգի:
Ա՜խ այդ Ուղտը խեղճ...
Իր կուզ-սապատով դիզում էր նա գա՛նձ,
կերակրրում էր մի ո՜ղջ պետություն,
իսկ ինքը սնվում միա՛յն տատասկով,
բայց և որոճում... միրաժնե՜ր լուսե,
ոսկեղեն տեսի՜լք:
Ոսկեկար բանված և ընդելուզված
կոշիկ-ոտնաման-մուճակ էր տալիս
մի սմբակավոր ու բազմապճեղ հսկա տերության,
իսկ ինքն՝ անպճե՛ղ,
իսկ ինքն՝ անսմբա՛կ,
բայց և՝ իր ոսկե՜ տեսիլքների մեջ,
բայց և՝ իր լուսե՜ միրաժների հետ...
Բեկանեմ շանթե՛ր՝
անարդարությա՜ն:
Երբ ուղտն, ասում են, կոտոշ է ուզում
նա կորցնում է և ականջները:
Սակայն կոտո՛շ չէր Ուղտի ուզածը:
Նրա երազը նույնքան փոքրիկ էր,
որքան ուղտային իր իսկ ականջը.
ծարավից ճայթքող իր աչքերի մեջ
մի հորդ աղբյուր էր մտովին տեսնում,
մի աղբյո՛ւր, որին հասնելը հեշտ էր,
որքան... ասեղով ջրհոր փորելը...
Եվ... Ուղտն այս անգամ ո՛չ միայն ականջ,
ականջների հետ կյա՜նք ն էլ կորցրրեց...
Եվ արաբական անբեղ-անմորուք անապատներում
ծաղկեց... ոսկո՜րը՝
ավելի՛ ճերմակ,

քան թե շուշանը՝ Մշո դաշտի մեջ,
քան թե հասմիկը՝ Բյուրակնի լանջին,
ու կեռասենին՝ Ակնի շուրջբոլոր:
Ոսկո՛րը ծաղկեց՝
Մի նորատեսակ մարիամածաղիկ,
որ չի թառամում ամառ ու ձմեռ
և չի թորշոմում տարիներ բազում...
Եվ ձեզ եմ ասում,
ձե՛զ, որ չեք տեսել.
-Այդ արաբական անապատներում
գիշեր ժամանակ
մինչև հիմա էլ,
կես հարյուրամյակ անցնելուց հետո,
պաղ ֆոսֆորային փայլ է արձակում ավազը մթին.
ուղտի պես ծունկի բերված ու մորթված
մի ամբողջ ազգի փտող ոսկորի՛ ֆոսֆորափայլը:
Փտող ոսկորի ֆոսֆորափա՛յլը,
որ չի կուրացնում մի՛մյանց նրանց,
որոնց աչքերի ցանցաթաղանթը
ջնարակված է նո՛ւյն այդ ֆոսֆորով.
և այսպիսին են գայլի աչքերը,
իսկ մեծատառված - խորհրդանշված Գորշինն՝ առավե՛լ...
-Բեկանեմ շանթե՛ր
իմ աչքերի՛ մեջ՝
անապատային ֆոսֆորափայլից կիսակուրացող
իմ զո՛ւյգ աչքերի:
Եվ գո՛ց աչքերով ես ասում եմ ձեզ.
-Եթե Փոքր ու Մեծ Մասիսները դուք զանգ չեք համարում,
գեթ համարեցեք բրածոյացած - վիթխարի սապատ՝
ա՛յն, ինչ որ մնաց Ուխտավոր Ուղտից...

-Բեկանեմ շանթե՛ր՝
ձյան փոթորիկով ինքն իրեն ծեծող,
ինքն իրեն կոծող
իմ գլխի՛ վրա...
Եվ հիմա արդեն՝ գլուխս բռնած՝ ես ձե՛զ չեմ ասում,
ես ի՛նձ եմ հարցնում՝ գլուխըս բռնած.
-Այս ի՞նչ անիծյալ հունդից ծիլ առավ
և արմատ ու բուն ձգեց աշխարհում
այս տոհմածառը՝
իմը և ձերը,
որ ցցվեց իբրև կանաչ-կենդանի մի ուղեփակոց
չորս չար խորշակի քառուղում բանուկ,
և մեզ ամենքիս դարեր ստիպեց
և ստիպում է ասել վերստին.
«Կորիցէ՛ օրը, յորում ես ծնայ»...
Թողեք ես լռեմ
և թող անլեզու քարերը խոսեն քարեղեն լեզվով.
-Այս ազգը որի՞ց և ինչո՞վ է վատ,-
պատասխա՛ն տվեք, քարե՛րն են հարցնում,-
այս ազգը ումի՞ց և ինչո՞վ է վատ,
որ դատապարտվեց ա՛յսչափ վատության,-
պատասխա՛ն տվեք, քարե՛րն են հարցնում:
Եվ ո՞վ, և ինչո՞ւ սրանց «հայ» կոչեց,
որ հանգավորվի միմիայն «վայ»-ով:
Եվ ինչպե՞ս, և ե՞րբ, ի՞նչ ուժով արդյոք
(թեկուզև՝ ինչպես ատոմն ատոմից,
թեկուզև՝ ահեղ պայթյունի՛ գնով
և կործանումի սպասմա՛մբ թեկուզ)
իրարից «հայը» ու «վայը» պոկե՛լ,
ինչպես ես հիմա շանթեր եմ պոկում

և խշրտուքով բեկանում-բեկում
իմ խավարադեմ - կուպրածեփ հոգում,
ուր գահավիժված հրեշտակներն են մորմոքում անխոս
մեռած հավատի
և մարած հույսի դիակի՛ վրա՝
միակի՛ վրա...
Ա՛խ, եթե հիմա կարողանայի և ձա՛յնը պոկել
իմ իսկ կոկորդից,
ինչպես զանգերի լեզվակներն էին Տարոնում պոկում
և լեզվակի տեղ կախ տալիս շներ,
որ ժամերգության փոխարեն սրանք,
իրենց ոռնոցով ու վնգստոցով,
ծաղրեն Հիսուսին և Հորը նրա՝
Տիրոջն Անտերաց.
«Շունք բազումք եղեն զինեւ:
Արի՛, Տէ՛ր, եւ փրկեա՛ դու զիս»...
Ա՛խ, եթե հիմա կարողանայի և ձա՛յնը պոկել
կոկորդից իմ խեղճ
և օգտագործել իբրև խարազան՝
չգիտեմ, թե ո՛ւմ մեջքին կամ դեմքին,
միա՛յն թե մեզնից նա բա՛րձը ոռնար
և իր ոռնոցով մի պահ լռեցներ
մեր ցա՛վը,
ցա՛վը՝
մեր անլռելի՛ն...
Բայց ո՛չ, թողե՛ք ես իմ ճիչը խեղդեմ,
ինչպես որ մայրն էր խեղդում մանուկին,
որ կուրանալիք աչքերով իր զույգ
չտեսներ նրա
կոկոն գլխիկի քարագանումը խուժանի ձեռքով...

Չէ՛, թողե՛ք հեծնեմ իմ տառապանքին,
ինչպես հեքիաթի ա՛յն խոյին ծանոթ,
որի գույնն է լոկ որոշում, թե մենք ո՞ւր պիտի ընկնենք՝
Լո՞ւյս թե՞ Մութ աշխարհ:
Եվ հաջողություն կոչվածը մարդու
կամ բախտ ասվածը մի ամբողջ ազգի
կախված չէ՞ արդյոք
այդ խոյի գույնի՛ց, գույնի՛ց միմիայն՝
սև կամ ճերմակից:
Ու եթե միայն գույնից է կախված ամեն բան կյանքում՝
թողե՛ք, որ ես այդ գույները ջնջե՛մ,
ո՛չ թե սպունգով,
այլ իմ երեսո՛վ,
որ և իմը չէ, այլ մարդկությանը:
Եվ մարդկությունն էլ թող որ մումիանա
ճառագայթային ախտի այս դարում
ու մնա այդպես՝
մի երեսը սև, երկրորդը ճերմակ...
Եվ թողե՛ք նաև...
Օ ո՛չ, մի՛ թողեք,
որ վերստին գան ու հասնեն օրեր՝
ա՛յն օրերի պես,
երբ կես մի երկիր կանացի ձայնով,
իր սրտակեղեք «երանի՛»-ն գոռաց՝
ի լուր աշխարհի,
պատմությանն ի հուշ.
-«Երանի՛ ամլոց և որովայնի, որք ոչ ինչ ծնան»...
Իսկ երկրորդ կեսը միևնույն երկրի,
այս անգամ արդեն այրերի ձայնով,
անզորությունից կիսացնորուն,

ի տես լրբենի ապիրատության՝
լեռների քունքին իր ճիչը մեխեց.
-«Լերի՜նք, անկերո՛ւք դուք ի վերայ մեր»...
Եվ բլուրների կողերից կախեց
իր աղերսանքը տղամարդկային.
-...«ծածկեցե՜ք զմեզ»...
Բայց նրանց վրա լեռները չընկան
և չծածկեցին բլուրներն անսիրտ:
Ո՛չ.
վրա ընկավ, ամենից առաջ, օրե՜նքն անօրեն:
Խլված էր և՛ զենք,
և՛ դանակ, և՛ ձեռք,
մինչև անգամ ձե՜ռք, բռո՛ւնցք ու կռո՛ւփ.
կապկպված էին թև՛ ու ձե՜ռք անգամ:
Մնում էր... ատամ
ու
մնում էր... ոտք.
ո՛տք՝
ցլամարդկանց ամորձիքների՜ն հասցեագրված,
և ատա՛մ՝
ստո՜ւյգ հասցեագրված
մարդ-գազանների փրչոտ կոկորդի՛ն...
Բայց խլվում էին ա՛յդ զենքերն անգամ.
ատամներն էին քարերով ջարդում
ու ոտքերն էին մարմնից անջատում
ինչո՜վ որ կուզեք, ինչո՜վ կամենաք.
թրով ու քարով,
սրով, տապարով,
սրոցով բահի,
մանգաղ-գերանով,

և կամ պարզապես հոդալուծությամբ,
և այս ամենը
ո՛չ միայն հանգի՞ստ-անվրդո՞վ-անդո՞ղ,
և ո՛չ էլ միայն մոլի եռանդով,
այլև մի տեսակ արբշիռ ցնծությա՞մբ...
Գնդակն ափսոս էր.
մեկ գլխի համար
մեկ գնդակն արժեր երկու հատ ոսկի,
որ հանգիստ մեռնել ցանկացողն ինքը պիտի վճարեր,
բայց, դժբախտաբար, չկա՞ր... խլվա՛ծ էր...
Գնդակն ափսոս էր,
իսկ ձեռքն էլ՝ հոգնած.
բթացել էին բահ-մանգաղ-կացին,
և ուժաթափվել դաստակ ու բազուկ...
Հոգնած չէր ջուրը,
բայց նա՛ էլ հոգնեց.
իրենց մեջ առած բյուր դիակներից
հունավոր գետերն ափերից ելել-մոլորվել էին.
խորունկ ջրհորներն իրենց վզերը հանել էին դուրս,
առաջի՞ն անգամ իրենց կյանքի մեջ՝ հանել էին դուրս
և օդից հարբաց ու լույսից գինով՝
ուշաթափ փռվել-մոլորվել էին
դիակների պես,
դիակների հետ...
Դո՛ւք վկա չեղաք, ե՞ս եղա վկա,
թե ինչպես դարձավ այս լեռնակոզին
թատրոնից բացի
նաև մի կրկես,
ուր՝ կրակի հետ մրցության մտած՝
և ջուրը խաղաց բազմաթիվ դերեր:

Ջո՛ւրը, նո՛ւյն ջուրը՝
ապականիչ էր և լվացարար՝ միաժամանակ,
կործանարար էր, բայց նաև փրկիչ՝ միաժամանակ,
զոհասեղան էր, բայց և վաշխառու՝ միաժամանակ.
մի բաժակ ջուրը՝ Եփրատի ափին,
Տիգրիս գետի մոտ,
Բյուրակնի վրա,
մի բաժակ ջուրը մեկ ոսկի արժեր,
որ չկա՛ր, ավա՛ղ, խլված էր վաղուց...
Ախ, ջո՛ւրը, ջո՛ւրը...
Վայրենիների վայրենի վարքով
մարդընտելացավ ջուրը վայրենի.
մրցակցում էին իրենց շատությամբ
թռչունների չուն՝ խանձված երկնքով,
դիակների չուն՝ ջրերի վրա,
և ձկների չուն՝ նույն ջրերի մեջ:
Նովրուզ բայրամ էր ձկների համար,
մի նովրուզ բայրամ,
որ հարատևեց ամբողջ յո՛թ ամիս,
իսկ հետո նաև՝ ամբողջ յոթ տարի՛.
-Շյո՛ւքըր ալլահա...
Ամբողջ յո՛թ տարի ջուրը տառապեց
չար աչքացավով՝
արնակոխությամբ:
Եվ մեքքայական Զեմ-Զեմ աղբյուրից
ոչ պակաս պաշտված ու սուրբ աղբյուրներ
նույն աչքացավից հավե՛տ կուրացան.
-Ո՞ւր ես, կույրերին բժշկող Հիսուս...
Զուրն էին նետում մայրերը մանկանց,
ու նետվում իրենք

ու նետվում այնպե՛ս,
ինչպես նետվում են գիրկը սիրածի...
Անպատվությունից փրկվելու հույսով
ջրացուլերից ջուրը նախընտրած բյուրավոր կանանց,
դեռ կնիքավոր - չմատնահպված բազում կույսերի,
դեռ մեղրամիսի
ծանծաղ հատակը չհասած անծին հարսների վրա
կարմիր ծին-խալ էր հապշտապ դաջում
ջրացուլերի գնդակը կուրաչ՝
գեղեցկացնելով վախճանը նրանց,
այլանդակելով ջուրը գեղեցիկ...
Օ՜, տառապանքը բյուրհազար կանանց և աղջիկների,
ա՛յն տառապանքը,
որ իր ծանրությամբ պիտի՜ որ ազդեր
ապուշի նման անվերջ թավալվող
այս հողագնդի պտույտի վրա...
Օրացույցն էլի՝
ձեռնածու կնոջ հայտնի նազանքով
շարունակում էր իր հագուստները ուսերից նետել,-
ամեն օր՝ մի շոր,-
և մինչև հասներ իր կրկեսային ծանոթ վիճակին՝
մինչև մերկանար,
պիտի անցնեին շուրջ 365 օրեր,
այնինչ բյուրհազար քույրերին նրա,
կիսացնորված-խելագարվելիք նրա քույրերին,
նույն այդ վիճակին հասցընում էին երեք վայրկյանում.
բազմության առաջ, մահվան երթի մեջ,
կճեպում էին ու կլպում նրանց՝
հասած ու դեռ խակ ընկույզների պես,
և կլպողների ձեռքերը բնավ չէին սևանում.

կեղտից ու մրից, լերդ-լերդ արյունից
ընդմիշտ սևացածն ինչպե՞ս սևանար մեկ ուրիշ սևով...
Արևի երես երբեք չտեսած
և նշխարի պես սպիտակ ու սուրբ
նրանց մերկացած մարմընի վրա
իրենց արևառ ու հողմահարված գլուխը կարծես
ոչ թե սեփական,
այլ փոխառնըվա՛ծ գլուխ էր թվում,
մի գլուխ օտա՛ր,
ասես դնովի՛...